

ԻՆՏԵՐՈՒՒՄ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանց համարատան մէջ:
Օտարադարձացիք իմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերէն):
Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիցումով:
Հայտարարութիւնները համար վճարում են
կարգաւորելով ըստ 2 կոպեկի:

„ՄՇԱԿ“ ԼՐԱԳԻՐ ԳԵՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. ի ն

(ՏԵՍՆԵՐՈՒՄ ՏԵՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոգրամայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տոն և տոններէն հետեւեալ օրերէն):

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տեղութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելետոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կես տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3 ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանիայի հրէաները.— Ներքին տեսութիւն: Նամակ Եւրոպայից: Նամակ Արշակունցի: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Անգլիա: Թուրքիա: Մշակութիւն: Հեռագիրներ: Գայտարարութիւններ:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՐԵԱՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, գերմանական մի կուսակցութիւն, որ հակառակ է հրէաների իրաւունքների, նորերումն ինդիք ներկայացրեց կառավարութեանը, որով պահանջում է թէ հրէաներից խլվեն մի քանի քաղաքական իրաւունքներ: Այդ միջնադարեան հրէշաւոր շարժման դէմ, որի գլխաւոր պարագլուխներէն մէկն է պրոֆէսոր Տրէյլէ, հանդէս դուրս եկան Բերլինի ամենայայտնի անձինք թէ գիտութեան և թէ պետական կեանքի մէջ: Տրէյլէի խօսքերէն թէ „Գերմանիայի հրէաները Գերմանիայի դժբաղդութիւնն են“, ոչ թէ Բերլինի, բայց և Գերմանիայի այլ քաղաքների բուն գերմանացիները պատասխանում են կրօնական համբերողութեան սկզբունքը քարոզելով:

Սենք մասամբ ծանօթացրին քմեր ընթերցողներին այդ հակահրէական շարժման հետ մեր անցեալ առաջնորդող յօդուածներից մինի մէջ: Այժմ հակահրէական ինդիքը արդէն ներկայացրած է լանդտագիւն, պատգամաւորների ժողովին, որ արդէն մի քանի նիստեր ունեցաւ այդ ինդիքը քննելու համար: Ժողովը լի էր հասարակութեամբ, փողոցի վրա,

ժողովի ղեկների մօտ մինչև անգամ հաւաքված էր ամբողջ, սպասելով հետաքրքիր, աղմկալի նիստերի: Բայց ընդհանրապէս, նիստերը հանդարտ անցան: Այդ յանգրի 20-ին խօսեց պատգամաւոր Հենէլ, որ բացատրելով ինդիքը, յիշեցրեց Բերլինի կոնգրէսի այն վճիռը, որով պահանջվում է Բուլղարիայի, Սերբիայի և Չեռնօգորիայի հրէաների համար այդ երկիրների քրիստոնեաների հետ հաւասար իրաւունքներ և վերջացրեց իր խօսքը հարցնելով արդեօք ինքն Գերմանիան, որի մայրաքաղաքում էր կայացել այդ վճիռը, կը կամենար ազատութեան կողմից իրան զարգացման աւելի ստոր աստիճանի վրա տեսնել, քան թէ այդ փոքրիկ երկիրները: Այժմ Հուլիսի 1-ը, խորհրդի փոխնախագահ, տեղութեան կողմից պատասխանեց, որ թէև տեղութեանը դեռ ևս պաշտօնապէս յայտնի չէ հրէաների դէմ ուղերձի բովանդակութիւնը, բայց նա կարող է հաստատ աւելի որ ներկայ օրէնսդրութիւնը ճանաչելով կատարեալ հաւասարութիւն զաւանթութիւնների մէջ, տեղութիւնը ամենեւին դիտաւորութիւն չունի փոխել այդ օրէնքը: Առաջադիմական կուսակցութեանը պատկանողներ Օէյ-ֆարտ, Վիրխով և Տրէյլէ խօսեցին ընդդէմ հակահրէական շարժման և հաստատեցին որ միայն նախանձը դէպի նիւթական բարօրութիւն ունեցող մարդիկ կարող է թելադրել հրէաների դէմ բացառական օրէնքներ պահանջելու: Կենտրոնի ներկայացուցիչները յայտնեցին որ այդ

ինդիքը, նրանց կարծիքով, ոչ թէ պարզամիտի միջոցով պիտի վճռվի, այլ հասարակական կեանքի և գիտութեան միջոցով: Ինչոր ատենաբանները փոխադարձ համբերողութիւն էին քարոզում միմեանց: Կղերականները պահանջում էին որ կաթոլիկները վայելէին Գերմանիայում նոյն իրաւունքները, որ վայելում են հրէաները:

Ահալա հրէամոլ պրոֆէսոր Տրէյլէ դեռ չէ խօսել: Նրանից յետոյ կը խօսի մի շատ տաղանդաւոր ատենաբան, պ. Մայէր, բրէսլաւեցի հրէայ:

Նոյեմբերի 22-ի լանդտագի նիստի մէջ խօսեց հրէամոլ Հոէկէր, պալատական քահանայ: Ճառը գեղեցիկ կերպով կազմված էր, բայց լի էր սփռնեցով և պատմական անճշդութիւններով: Նրան պատասխանեց Բիկկերտ: Սա յիշեցրեց որ Աւստրիայում գերմանացիները հալածված են ունդարացիներով ու չէին երթում և գերմանացիները կը կորցնէին իրանց օտարահալածակ ցեղակիցներին պաշտպանելու իրաւունքը, եթէ իրանց սեփական պետութեան մէջ իրանք էլ ուրիշներին հալածէին և խտրութիւն դնէին ցեղերի և դաւանութիւնների մէջ: Այդ նիստը աւելի կենդանի էր, քան թէ նախընթացները:

Հակահրէական շարժումը հետաքրքրում է ամբողջ Գերմանիային: Նիւրնբերգի քաղաքային խորհուրդը միաձայն հաւանութեամբ վճռեց հրատարակել մի ազդարարութիւն, որի մէջ սաստիկ պախարակում է հրէաների դէմ յարուցած հալածանքները: Նշանաւորն այն է որ Նիւրնբերգի քաղաքային խորհուրդը ամբողջապէս բաղկացած է գերմանացի ազնականներից:

Բերլինի „National Zeitg“ լրագիրը յայտնվում է հակահրէական շարժման դէմ: Լրագիրը ասում է, որ մի կողմի ատենութիւնը և կրքերը կը սաստկացնեն միւս կողմի ատենութիւնն ու կրքերը: Ամեն մարդ, քրիստոնեայ թէ հրէայ, աւելացնում է թերթը, իրաւունք ունի յարգված և վարձատրութեան համեմատ, նոյնպէս անմիջապէս պետք է դառնալ և դատաւարութեամբ լինի անհատապէս, առանց մի ամբողջ դասա-

կարգի պակասութիւնների ու սխալների պատասխանատուութիւնը կրելու:

Ուրիշ կերպ էր էլ կարող լինել. ամեն տեղ կան խաւարասերներ, կամ Տրէյլէի պէս անազնիւ և շահասէր մարդիկ, բայց լուսաւորված Գերմանիայի մեծամասնութիւնը չէր կարող ընդունել մի բացառական, անարդար օրէնք Գերմանիայի այն քաղաքացիների վերաբերութեամբ, որոնց ամբողջ յանցանքը միայն նրա մէջն է, որ նրանք մովսիսական կրօնին են պատկանում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՆԱՎԵՐԻՑ

Թէ ինչ բարեբար ազդեցութիւն ունի ամեն մի բարեկարգ ուսումնարան, դա մի պարզ ճշմարտութիւն է, որ կարօտ չէ ոչինչ բացատրութեան: Սակայն, միւս կողմից, ցաւալի է խոստովանել որ Շուլլեր բաղամարդ գիւղը ներկայումս չունի և ոչ մի ուսումնարան, որ լցուցանէր տեղական մանուկները ուսման կարօտը: Թողնե՛ք, ընթերցող, թատրօն, հատարակաց ընթերցարաններ, գրականական երեկոներ, հրապարակական դասաստութիւններ, որոնց մասին Շուլլերը անգամ հասկացողութիւն չունի. վերջինս գուրկ է մինչև անգամ ուսումնարանի անհրաժեշտ հարկաւորութեան գաղափարից: Այս օրերս Ա. և Ս. երկու երիտասարդներ կամենալով արական ուսումնարաններ ունենալ, քրեկցին ամեն միւր մի մի սենեակ, որ աւելի նման է հաւաքոյնի, քան իսկական ուսումնարանական շինութեան:

Յաւայի է այդ սենեակների կերպարանքը. սենեակները են նոյն և խոնավ, պատուհանները կոտրած, յատակները չը տախտակած, որպիսի հանգամանքներից իւրեք մանուկները միշտ դուրս են ցրտից (մանաւանդ որ կրակ ամենեւին չէ վառվում) ու միշտ ներս են չնչում յատակից բարձրանող փոշին, ու վնասում հետեւապէս իրանց թանգաղին տեղութիւնները: Այդ պարունների դասատուութեան մասին խօսել անգամ աւելորդ է. դասատուութիւնը կայանում է առհասարակ նրանում, որ մանուկները թուփակի նման անդիր անէին անմիտ երգեր, ինչպէս է Վ. Ուսացաւ, լուսն է բարին, ծիտն է ծառին և միշտ բղաւէին նրանց ի տես ուամիկ ամբոխի, և կամ խառնճաղանճ ձևաւորների վրայով անմիտ նախադասութիւններ անցնէին:

Ուսումնարան բանալու գործի մէջ, ինչպէս նաև գրեթէ ամեն բանի մէջ, հասարակ գիւղացին ոչինչ ձայն չունի. իսկ ապահովացած հարուստ դասը ըստ մեծի մասին բաւականաւոր է իր որդոց տաւարած շինելով, հալու մի քանիսները ուսումնառութեան նպատակով իրանց որդոց թիֆլիս ուղարկած ունենալ Զարմանայի չէ, ուրեմն, որ գողութիւն, մարդապաշտութիւն, վաղներ կարող, զէղեր կրակել և այլ անբարոյական արտեր բունաւորված են Շուլլավերի մէջ, և փոխանակ անհետաւոր, աւելանում են, ընդհանրապէս, հեռանում:

Նոր եկած պոլիցիական պրիտաւ Մամիկոնեանը, ասում են, մի քանի տեղական անձանց մօտ մի անգամ խօսեցել է ուսումնարանի հարկաւորութեան մասին. տեսնե՛ք այդ խօսակցու-

Թիւեր ինչ գործնական հետեանքի կը հասնի: Գոյս կայ, որ յիշեալ պարտնի յորդորանքով Շուշի լաւերը ամենակարճ միջոցում կարող է ունենայ բարեկարգ արական և իրական ուսումնարաններ: Ի դէպ է այստեղ յայտնել, որ Շուշի լաւերը առաջին անգամ արժանացաւ օրիորդ Ե. Ք-էի գալստեան, որը յառաջագոյն կերպով աւարտած լինելով իր ուսման ընթացքը Թիֆլիսի Գայեանեան դպրոցում, ունի ընդունակութիւն, ինչպէս լավում է, մանկավարժական գործունէութեան: Գանկայի էր որ մեր հասարակութիւնը, գոնէ այս անգամ խելքի գալով, բաւականացուցէր պայմաններով հրաշքի յարգելի օրիորդին իրական ուսումնարան հիմնելու: Ապա թէ ոչ, թող խմանայ նա, որ միշտ պարտաւոր կը մնայ Աստուծոյ և մարդկութեան առաջն իր որդոց բարոյական և մտաւոր թշուառութեան համար:

ՆԱՍՏԱԿ ԳՈՒՐԱՅԻՅ

21 հոկտեմբերի

«Մշակ» № 151 և 163-ի ներքին լուրերի բաժնում երեքսան մի անգամ պարտնի Ղուրաժից հաղորդած հետեւալ լուրերը: № 151-ի մէջ. — «Ն. Բաղաթուրով և Հ. Արիստոյով հանգստակութիւն ունեն հաւաքած յօդուտ վանի տնակները, ըստ ղեւ ևս հայի չեն ներկայացնում հասարակութեանը»: № 163-ում. «Ն. Բաժնիկները հաւաքած ունէ մօտ 100 ր. վաստակներ սովորական անուանով, բայց ... առաւել, պարտնի դիտարկութիւն ունի յիշեալ գումարը նուիրել տեղական դպրոցին, որպիսի կամայականութեան դէմ պ. պ. նուիրատուները բողոքում են, և այլն»:

Սովորած եւ առաւել, որ այս լուրերը բոլորովին հեռու են իսկութեանից և հնարած են թերեւ մի ցնորամիտ անձից, որը ցանկանալով թղթակցի պաշտօն կատարել, սխալ է ի շարն գործ դնել լրագրական հրապարակութիւնը և այսպիսի երեսակական լուրեր է հաղորդել, իսկ «Մշակ» խմբագրութիւնն էլ ի հարկէ միամտաբար, հրատարակել է ի գիտութիւն հասարակաց: Իմ դիտարկութեանը էր այսպիսի մտացածին լուրերը լուրեւանը արձամարտել և երբեք չը պատասխանել, վասն զի մեր գուրեցի նուիրատու եղբայրները զիտեն, որ իրենց նուէրը արդէն հասել է իր նպատակին «Մշակ» միջոցով: Բայց որովհետեւ ստացանք զանազան քաղաքներում բնակվող մեր բարեկամներից նամակներ, որոնք խնդրում էին ինձանից լրագրագրութիւն «Մշակ» № 151 և 163-ով հաղորդված լուրերի մասին, ուստի ներկայումս յանձն առի պատմել եղբայրները և խաղաղացիկ օտարաքաղաքացի ընթերցող հասարակութեան ու բարեկամների խառնած մտքերը:

Վանի սովորաբար մեր եղբայր օգնելու նպատակով, յիշաւ, ևս Ղուրաժի յարգելի հասարակութիւնից հաւաքել է ընդամենը 52 ր. 70 կոպ. և պատրաստվել է ի ուղարկելու «Մշակին», բայց պ. Նիկ. Արիստոյովի կողմից և կրկին ինչո՞ւրանօք յանձնեցի նրան նուիրատուաց ցուցակի հետ, որպէս զի ինքն այդ փողերը իր հաւաքածներին հետ ուղարկել խմբագրութեանը, խնայելով, որ այսպէս գումարն իր հանգանակածն է և այսքան Նիկ. Բաժնիկներն: Պ. Արիստոյովանցը ստանալով ինձանից այդ փողերը, արդարեւ ուղարկել է «Մշակին», որ և այս հրատարակվել է «Մշակ» № 130-ի մէջ պ. պ. նուիրատուաց ցուցակի հետ միասին. բայց տղայական փառասիրութեամբ կարծելով, որ այս գործը մի առանձին փառք և պատիւ կը բերէ իր անունին, ըստ որում միայնակ ինքը կարողացել է գուրեցի փոքրամիկ հայերից ժողովել Վանի սովորական եղբայր օգնելու 100 ր., զրպէս ի յիշել իմ անունը, իմ հանգանակութեամբ հաւաքած փողերը գումարը և իրան յանձնելու: Ահա այդպէս տեղիք են տուել ընթերցող հասարակութեան մտքերը խառնակութեանը ունաց միմոսների հաղորդած սուտ տեղեկութիւնները:

Զարմանալի իրողութիւն: Հասարակաց իրաւանց պաշտպան հանդիսացող Ղուրաժի անցյալ թղթակցի պարտն, հարցնում եմ ձեզանից, արդիօք մի կօպէկ ունիք նուիրած մի որ և է բաւականութեամբ նպատակի և կամ ձեռք մեր սովորել եղբայրների օգնելու: Եւ արդեօք չէր կարելի Ղուրաժիում անձամբ ինձանից տեղեկանալ այդ փողերի ուր և ինչ լինելը: Եւ երբ անկարող էք

որ և ինչ ձեռք տեղեկութիւններ հաղորդելու, ինչ հարկաւորութիւն կայ այդպիսի երեսակական ցնորաբանութիւններ մտածելու և անամթաբար լրագրիւններ էջերը սրբապղծելու:

Մեծագոյն խմբագիր, խնդրեմ երկուսուք բաւականէք տղայքին ձեռք պատուական «Մշակ» մէջ, որով և կը փարատէք անհիմն և անտեղի կասկածը, որը տեղիք է առել ձեր պ. թղթակցի սուտ տեղեկութիւններից և պ. Նիկ. Արիստոյովանցի անճշտութիւնից:

Այսքանս էլ աւելացնեմ, որ այս հերքումը ձեռք կը վայելէր պ. Ն. Արիստոյովանցին, որը պարտաւոր էր անձամբ հրապարակաւ խոստովանել գործի իսկութիւնը իմ պատիւս վերականգնելու համար. բայց տեսնելով որ պարտն չէ մտածում մինչև անգամ սրա մասին, ուստի ստիպված եղաւ ես գրել և ուղարկել «Մշակին»:

Նիկոլայ Բ. Բաժնիկներ

ՆԱՍՏԱԿ ՍՂՆԱՅԻՅ

6 նոյեմբերի

Չը նայելով, որ այս տարվան առաւ բերքը մուսաղից մեղ անցեալ տարվան սով, այստեւանային ժողովուրդը դեռ ևս չէ դուրս եկել ապագայ տարիների անաշուղթիւնների երկիւղից և այս պատճառաւ իւրաքանչիւր գիւղացին փոխանակ վաճառելու իր ցորենը, ածել է հորերի մէջ և դժուարութիւնով պահում է նրանց: Բայց սա ինչ օգուտ կարող էր բերել մեզ, եթէ, զիջուք թէ, անաշուղ տարիներին էլ հանդիպէինք. չէ որ այս իրողութիւնը միայն կը դիւրացնէր ունեւոր անհատի վիճակը, իսկ հասարակութիւնը և մանաւանդ նրա չքաւոր դասը դարձաւ կենթարկելին սովի ժամիւններին: Հարկաւոր էր ուրեմն, որ արեւելից մտածէր ընդհանուր օգուտը կէտից և հիմեք Սլանկուտի ինչպէս չըճապատող գիւղերի կենտրոնում, մի շտեմարան և նրանով ապահովացնէր իր և իր վիճակի գրեթէ բոլորը: Բայց ինչ օգուտ թէ հայերէն լրագրի մէջ կը տպւեն հարցը ու մէջ այսպիսի հասարակութեան կարեւորներին վերաբերեալ կարեւոր խնդիրներ, երբ 2 կամ 3 կարգացողից աւելի չէք գտնի այստեղ. «Классовъ» ու «Кредитъ» այստեղ յաճախ են կարդացվում, իսկ հայերէնը ամենեւին:

Հայերէն խօսալու մասին էլ կասեմ, որ հայերէն թէ և խօսում է արեւելիցին, բայց այն ժամանակ աւելի էր որ հարկաւորութիւն է ըզգում նրա մէջ, ապա թէ ոչ նրա գործածական լեզուն առհասարակ վրացերէնն է: Առհասարակ ժամանակ նա ստիպված է միշտ վրացերէն լեզունը դիմելու, որովհետեւ ամեն օր, բայց այն որ բազմաթիւ խառնութիւնը լիքը կը տեսնէք վրացերէններով—առհասարակ նպատակաւ, չըճակայ գիւղերիցն էլ ամեն օր բերում են նրանք զանազան վաճառելի նիւթեր և այսպէս միշտ նրանց հետ ունեն գործը, թող այն, որ այստեղի հայերին էլ յաճախակի է պատահում գնալ գիւղերը վաճառակամական այլ և այլ գործերով և ամիմոսներով մնալ այն տեղ: Ուրեմն հայերը ստիպված են վրացերէն խօսելու, բայց այս իրողութիւնը կարող էր բոլորովին խորթացնէր նրանց իրենց մայրենի լեզուից, եթէ որ գոնէ մի կողմից իրենց ապագայ սերունդը չը կրթէին նրա մէջ. բայց սրա մէջն էլ անտարբեր են սրբ. նախնիքը: Նրանք 1860 թ. մի ծխական ուսումնարան են հիմնել ու Կարապետ եկեղեցու բակում և շատ արտունջներ են յարուցանում նրա կրումը որ այսքան միջոցում ոչ մի երեխի աշակերտ չէ դուրս եկել այն տեղից և որ ուսուցիչները բաւ չեն սովորեցնում: Բայց նա չէ մտածում այն, թէ մի դաստիարակից բաղկացած ուսումնարանը հրաշքներ չէ կարող գործել, մանաւանդ որ 2 կամ 3 տարուց աւելի դժուար թէ նրանք պահեն իրենց որդիքը այնտեղ: Նա եթէ կամենում էր իր որդոց յառաջագոյն տեսնել ուսման մէջ, պէտք է դեռ մտածէր ուսումնարանի նիւթական միջոցների պատշաճութեան մասին, ապա բանար քանի մի դաստիարակներ, հրաշքեր բաւ ուսուցիչներին ու այնուհետեւ պահանջէր յառաջողութիւն: Բայց այժմ, երբ որ իր ուսումնարանի նիւթական դրութեան մասին ոչինչ տեղեկութիւն չունի և ոչ էլ կամենում է տեղեկանալ և մտածել նրա բարօրութեան և սպասմունքի մասին, որ ուսումնարանի գլխին հեռուից հայրական խրատներ կարդալով ոչինչ օգուտ չէ կարող տալ, որովհետեւ ամեն ձեռնարկութեան

մէջ հարկաւոր է գործունէութիւն և ոչ մեծաբանութիւն: Որքան ևս մտաբերում եմ, Սլանկուտ շատ հայաբնակ քաղաքներին օրինակ եղաւ ուսումնարանի բանալու գործի մէջ, այն ինչ ներանք բաւականին առաջ գնալով թէ բարոյացէս և թէ նիւթականապէս մեր ընդհակառակ օրէցօր յետ ու յետ գնալով մօտ է համարեա «Հոգեւոր» ձայնը լսելուն... Տեղույս ուսումնարանը բաւականին յաջող է տանում իր գործը և միշտ շնորհակալութիւն է քստանում իր գիրկնակներից: Հով. 7-ին ուսումնարանների հոգ. պ. Եսայիայի այստեղ էր. նորին գերազանցութիւնը քաղաքացիներից կլուրում ձայն հրաւիրվեցաւ: Նրա այցելութիւնը այստեղ այն օգուտը ունեցաւ, որ քաղաքս նոյն ամսին 19 պարտաւորվեցաւ իւրաքանչիւր տարին 3000 լուրի վճարել հարկի հետ միասին և հիմնել այստեղ նախ օրիորդաց ուսումնարան և երկրորդ արհեստական և առեւտրական մասերն էլ յարակցել քաղաքային ուսումնարանի հետ:

Այսօր մեր հրապարակի վրա ալիւրի պուրը 2 ր. 40 կօպէկի է գնաճատվում: այսպիսի միտեղ, ինչպէս Սլանկուտ, որ շատ յարմար դրութիւն ունի իր շրջապատ գիւղերից և Զաքարիայի կողմերից միջերեքներն ընդունելու իր մէջ, այսպէս չը պէտք է լինէր, բայց ընդհակառակն երեւում է, որ այս ձմեռը անցեալ տարվանից աւելի

կը բարձրանայ ալիւրի գինը: Մինչև ցայժմ գոնէ փայտի կողմից դժուարութիւններ չէինք կրում, ինչի բուր կարելի էր 15—20 կ. գնել, այժմ նա էլ 60 կօպէկի է բարձրացել. որս պատճառն էլ քաղաքացուց անտարբերութիւնն է: Սլանկուտ իր արեւմտեան կողմը իրեն պատկանելի մի մեծ անտառ ունի, որ մեր շրջակայ գիւղերի վրայի իշխանները իրենցն են սկսեցան անցնել և որս վրա ոչ ուղարկելու դարձնող և ոչ հոգեւոր կայ այնտեղ. մէկը միւսին է նայում... և ինչպէս արեւելիցներ, նոյնպէս և գիւղերի բնակիչները զանազան իշխաններից տուցած տոմսակներով իրաւունք են ստանում այնտեղից փայտ դուրս բերելու և սա ահա, թէ ինչպէս է լինում.— պատահում է որ Գլխավոր իշխանը մէկին փողով տոմսակ է տալիս, որով նա իրաւունք է ստանում անտառից փայտ դուրս բերելու, բայց մէկ էլ կը տեսնէք, որ իշ. Վանսն և կամ Նիկիօն անտառումն են պատահում և նրանք ոչ թէ չեն ընդունում իրենց ազգականին տոմսակը այլ և էն ու բոլոր ունեցածն էլ ինչով ու ձեռքով գլուխն ու թիկը ջարդված, քանի մի օր բան տարելով սոված ու ծարաւ ճանապարհ են գրեցում այնտեղից երեսուն, 40 և կամ աւելի պաւտա տոմսակ ունեցողներին, և զարմանալիս այն է, որ յաճախակի էլ է կրկնվում այս իրողութիւնը... Երեկ արտասուախառն ծիծաղով մի քանի խեղճ վրայից պատմում էին, թէ ամսոյս 4-ին, մոնկով իրենց բանտարկված տեղը նրանց բանտարկվող իշխանը, և մօտ բերելով նրանցից իւրաքանչիւրին մեծ տունակ, հրամայել էր ամեն ինչ մի մի անգամ նրա արտաքին արտաճառող գլխին համարելու և իրենք էլ հնազանդվել էին... Նայ ահա սղանկացոյ սրա համար, ինչի են սպաւել տալիս իրենց անդին անտառը շրջակայ գիւղերի անհամար բնակիչներին. չէ որ պիտոտիւն է յանձնել մեղ այն անտառը, արտանից էլ աւելի էլ ինչ ապացուցութիւն: Բայց հայի վերջին խելքն է բար, երեւի երբ որ փայտի կարօտութիւնը կը նեղացնի նրանց և անտառն էլ սպաւում կը լինի, այն ժամանակ կը դարձնեն և կը մտածեն դատարկ տեղը գոնէ պահանջել նրանցից նոր անտառ անկելու նրա պատակաւ, բայց այս կը լինի կարիկատուր...

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 20 հոկտեմ.

Թիֆլիսում պանդուխտ ուսանողների դրութիւնը շատ աննախանձելի է կենսական կողմից: Խօսքս ի հարկէ հարուստների որդոց վրա չէ, որոնց կեանքը ամենայն կողմից ապահովված է այստեղ, այլ չքաւորներին որոնք մեծ դժուարութեամբ են շարունակում իրանց ուսումը այստեղի ուսումնարաններում, անպահով դրութեան մէջ լինելով նիւթական կողմից:

Ուսումնարանում դասերը միջանալուստ պէս, թշուառ ուսանողը, գրքերը կուստովին, դեռ իր սենեակը չը հասած չտալով է ճանապարհին մի որ և ինչ տեղ ճաշել, որովհետեւ խեղճ անաւօտեան միայն երկու բաժակ կծովի թ է

է խմել, մի կտոր հացով, այլ ևս ոչինչ: Մինչև ժամի 2-ը նա ուսումնարանում դաւ է լսել, դաւ պատասխանել և աշխատել է. նրան անունը է հարկաւոր, որ ընդունակութիւն ունենայ վաղվայ դասերը պատրաստել կամ ընթերցանելի գրքեր կարդալ գիշերվայ մինչև ժամի 12-ը (երբեմն և աւելի) այնքան մնալով, նստած լապտերի աղօտ լուսի տակ: (Բայց ընթերցողը թող այս ևս խմանայ, որ նա առանց ընթերցանելու պիտի պառկի քնելու): Պարզ բան է, նա արժանապէս տեղ պիտի ձայնի: Բայց այդպիսի տեղերը լին են լինում ամենամարդկական մարդկեանցով, որոնց հետ շատ անվայել է աշակերտին նստել և ճաշել: Բայց ինչ պիտի անի նա սոված հօ մոռնելու չէ, երբ ուրիշ իրեն ձեռնառու տեղ չը կայ ճաշելու: Նորա նիւթական միջոցներն էլ չեն ներում գնալ երեւի հիւրանոցներ: Գուցէ ընթերցողը խորհուրդ տայ ուսանողին ընտանիքի մէջ ապրել. բայց այդ ևս անկարելի է. նախ որ միայն փոքր ի շատէ դրամական միջոց ունեցողին է այդ ձեռնառու, և երկրորդ, որ ուսանողի համար այնտեղ ազատ պարտաւոր են նկարելի է. նորան անհրաժեշտ է յարմարաւոր առանձին սենեակ, ուր նա իր ընկերներով կենտրոնացած իր դասական առարկաներով կարողանայ զբաղվել, խօսել նոցա հետ և այլն:

Մինչև այժմ ոչ մի ուսումնարանի վարչութիւն չէր արգելում իր աշակերտներին, այդպիսի արժանապէս տեղերում ճաշ ուտելու: որովհետեւ նրանք թաշ յայտնի էր նոցա նիւթական անապահովութիւնը: Իսկ այժմ, (չը դիտենք ինչ պատճառաւ) կրթական և ընթացական ուսումնարանների աշակերտներին խստիւ արգելված է այդ: Այդ ուսումնարանների վարչութիւնը նրանց մատնացայ է անտառ, ճաշելու համար, Կարօպա, Լժնգոն և այլ սոցա նման նշանաւոր հիւրանոցներ, ուր բոլորովին ձեռնառու չէ չքաւոր աշակերտներին, կրկնապատիկ է և ևս ապահով վճարել ճաշելու համար, այն ինչ պայտիս չքաւոր աշակերտներով լին են այդ երկու ուսումնարանները (և մեծ մասամբ ուսումն առնող հայ աշակերտներով): Ուրեմն ինչ պիտի անեն այդ վերջինները, եթէ ոչ թողնել ուսումնարանը—գրիվել ուսումը:

Զարմանալի է, որ մինչ այսօր Թիֆլիսի լրագրութիւնը անօգտաւոր է թողնում այստեղի մի կարեւոր հարց, որ կենսական հարց: Կարելի է անուանել չէ յորդորում հասարակութեան հիմնել մի հիւրանոց, ուր այստեղի ուսանողները, եթէ ոչ բնակվել, գոնէ արժան գնով կարողանային ճաշել: Ինչո՞ւ միայն հարուստների որդիք պիտի ուսանեն այստեղի ուսումնարաններում: միթէ աղքատ գեղացու որդին մասն չունի լուսաւորութեան այդ տաճարներից: միթէ պիտի տղիւտութեան մէջ մնայ նա, որովհետեւ միջոց չունի էժան ապրելու, չը պէտք է արդեօք նրան միջոց տալ:

Զարգող խմբագիր, յայտնելով ձեզ Թիֆլիսի պանդուխտ ուսանողների այս թշուառ դրութիւնը, յոյս ունեմք, որ նորա թարգման կը հանդիսանար հասարակութեան առջև, ձեր ազգօգուտ լրագրի էջերում:

Տիգրան Նաւասարդեանց

ՆԻՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Եղիշէ Մեծատունեանցը, որ իր ասելով մի մեծ գիւտ է արել բժշկութեան մէջ, խնդրում է մեղ յայտնել, որ նա իր գտած է Լ. Բ. Ս. Ի. Բ. արդէն ուղարկել է Մ. Պետերբուրգ կայսերական բժշկական Ակադեմիայի քննութեանը ներկայացնելու համար, որ իրաւունք ունենայ նրան գործադրելու: Այդ հրաշալի է Լ. Բ. Ս. Ի. Բ. հեղինակի խօսքերով, ճերմակներին մանկացնում է իսկ անտեղիներին աղաւ և պահում ամեն տեսակ հիւանդութիւններից մինչև նրանց կեանքի վերջը: Նա մարդու կեանքը երկարացնում է ուղիղ մինչև 160 տարի: Վաճառման համար հնչանակված են Թիֆլիսում Մարտիանայ փողոց պ. Զարուկի մոտ ընդ № 12, գիւտարկան գլխավոր խանութը: Մենք խորհուրդ կը տալինք պ. հեղինակին մի փոքր համբերող լինել և նախ քան բժշկական Ակադեմիայի քննութեանը իր հրաշալի գիւտը վաճառքի չը հանէ:

Ի. Գ. Ի. Ի. Բ. մեղ գրում են, Տաճկաստանի Սա

րի բիզնէսը անուշտով զիւրաւում, որ մօտ է ուսուցանանքին, կըզգո անուշտով մի հայի տան մէջ բնակուում էր մի քուրդ ընտանիք: Տան տիրոջ 18 տարեկան որդին սիրահարուում է քրդի աղջկայ վրա և փախցնում է նրան, բերում մինչև իզդիլը և այնտեղ պահուում է նրա հետ: Քրդերը հաւաքուում են և մահ են սպառնում տղայի հօրը, եթէ նա աղջկան չի վերադարձնուում: Հայրը երկուշիկ ստիպուած, բերել է տղան աղջկան և յանձնում է քրդերի ձեռքը: Չը նայելով, որ աղջիկը խտամովանուում է, թէ իր կամբով է փախել հայ աղջիկ հետ և սիրում է նրան, այնուամենայնիւ, քրդերը տանում են նրան մի ուրիշ գիւղ, խնդրում են, և զիտը զիւրաւում յետ քրդերով, ձգում են նոյն հայի տան երթիքից: Երաւունքները քրդերը հաւաքուում են և զիտը գուրս բերելով, ամբաստանում են հայկին սպանելու մէջ: Պարծը հասնում է թիւրքաց կառավարութեանը: Թէ տղան և թէ հայրը կառնաւորուում են որպէս քրեական յանցանքներ:

Մեզ հաղորդում են, որ ՀԱՒԱՅԱՐԻ Ա. Էջմիածնայ եկեղեցւում, տէր Գ. քահանայ, մի հարսանիքի հանդիսականութեան ժամանակ, ժամերով եկեղեցւում սպասելով թէ հարս ու փեսային և թէ հանդիսականները լազուովեանը, բազալխանայի վաճառականի նման, սակարկութիւն անելով պատկի խորհուրդը կատարելու փողի մասին:

ՇՈՒՂԱՎԵՐԻՑ մեզ գրում են, որ այդ գիւղի մէջ նշանակուած ոստիկանութեան պաշտօնայ ու Մամիկոնեան շատ բարեխիղճ կերպով է կատարում իր պարտականութիւնը:

Մեզ հաղորդում են ՇՈՒՂԱՎԵՐԻՑ հետեւեալը: Քանի մի ժամանակ սրանից առաջ մի վեց տարեկան աղջիկ ընկել է մի տան թնորի մէջ և այդքէ է: Այս տեսակ դէպքեր յաճախ են պատահում մեր գիւղերում: Կանայք գուրս են գալիս տանից հարեանների հետ զրոյց անելու, իսկ երեխաներին մնալ են թողնում, երեխաները կամ կուռում են միմեանց մէջ, կամ խաղում են և ընկնում են թնորի մէջ:

«Кавказ» լրագիրը լսել է, որ Արդուինի հայկաթօլիկները եպիսկոպոսին, սրբազան Զաքարեանին, որ այժմ թիֆլիս է եկած, կը յանձնակ կովկասի և Անդրկովկասի բոլոր հայկաթօլիկների թեմի կառավարութիւնը, բայց հօռմէական կաթօլիկներից, որոնք երեւի կը մնան զարձակ Մարտովի կաթօլիկ եպիսկոպոսի իշխանութեանը ենթարկուած: Ուստի թեմը հաւատացնում է, որ Զաքարեան եպիսկոպոսը վրաց ծագումից է և նրա իսկական ազգանունն է Կիկնաձէ: Լրագիրը երեւի չը գիտէ, որ ամբողջ Անդրկովկասում վրացի կաթօլիկներ չը կան, բոլորն էլ որոնք իրանց վրացի են ասում, նրանք հայկաթօլիկներ են, որոնք ուրացել են իրանց աղբիւրները: Տիպը, ազգանունները բոլորն էլ ցոյց են տալիս, թէ նրանք հայեր են և Անդրկովկասի բոլոր կաթօլիկ եկեղեցիներում ժամասացութեանը, պատարագը միշտ կատարվել է և կատարուում է հայերէն լեզուով: Միայն մի քանի տարի է, որ սիրում է մանկ մեր կաթօլիկ եկեղեցիներում վրացերէն լեզուն, եթէ մեր կաթօլիկները վրացերէն են և վրացի են, ինչի բոլոր եկեղեցական արարողութիւնները, պատարագը կատարուում էին հայերէն լեզուով: Եթէ վրացիները ընդունել են կաթօլիկութիւնը, նրանք պէտք է ընդունած լինէին այդ կրօնը ուսուցող տիւրապետութիւնից առաջ, որովհետեւ այժմ անհնարին է անցնել ուղղափառ եկեղեցուց դէպի մի ուրիշ որ և է եկեղեցի: Իսկ եթէ վրացիները վրաց թաղաւորների ժամանակ են ընդունել կաթօլիկութիւնը, ինչի են մողելով միմեայն հայոց լեզու իրանց եկեղեցիներում և երկար ժամանակ ոչ մի խօսք վրացերէն լեզուից չէր լսուում մեր երկրի կաթօլիկ եկեղեցիների բնոյց: Պաշտօնական էլ կաթօլիկ եկեղեցիներ միշտ ճանաչված էր և անուանուում էր «հայկաթօլիկ եկեղեցի» և պաշտօնական թղթերում, այն օրից, երբ Ռուսաստանը տիրապետել է երկրի, երբեք չէր պատահել վրացի-կաթօլիկ եկեղեցի բառը: Մի քանի տարի է միայն, որ այդ աղբիւրայն և գաւառան հայկաթօլիկները, մի յատկութիւն, որ յատուկ է հայերին, իրանց վրացի ձևացնելով, սկսեցին մշտնջեղ իրանց եկեղեցիներում տարմաներ և աւետարան վրացերէն լեզուով: Բայց ամբողջ պատարագը վրացեալ է կատարուում վրացերէն լեզուով, այլ

հայերէն: Հնարաւոր բան չէ, որ վրացին հայերէն լեզուն մոցնէր իր եկեղեցու մէջ:

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են: «Լուսւմ ենք, որ Մոսկուայի հայ հասարակութիւնը մտադիր է շուտով մի մեծ հանգանակութիւն բանալ իր մէջ Հայաստանի սովետանիքների համար: Շատ ուրախ ենք լսելով, որ Մոսկուայի մի յայտնի հայ հարուստը չէ կամենում հետեւել Ս. Պետերբուրգի մի կրէստի օրինակին, ուրիշներից ու զարկվող փողերը իր անունով նուիրելով Հայաստանի սովետանիքներին, այլ մտադիր է ինքն նուիրել մի նշանաւոր գումար թիւրքիայի հայ սովետանիքների օգտին»:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են: «Լուսւմ ենք, որ այս տեղի մի հայ կրէստ մտադիր լինելով Երզրումի և Վանի վրայէթներում ջնջին գնով առնել 82 դիւղ և այնտեղ փոխադրել ուղեւորով իր հարստահարութեան մեքենայութիւնները, սկսել է ագնաններ որոնել Երզրումի և Վանի մէջ իր շահակտ աֆերը գլուխ բերելու համար: Այդ գիտաւորութեամբ նա արդէն սկսել է բանակցել իրիմեանի և Ուսմանայի հետ: Վաշխառուն ժողովրդի աչքին թող փնելու համար ընծայել է Երզրումի եկեղեցիներից միմի մի էմանագին զանգակ»:

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, որ այդ տեղի համալսարանի պրօֆէսոր յայտնի արեւելագետ պ. Բ. Պատկանան, դիտաւորութիւն ունի զարնան ճանապարհորդել Վարաշաղ, Նուխի և Վարդաշէն: Հնադիտական խուզարկութիւններ և փորձածներ անելու համար եկող տարվայ հասգիտական ժողովի համար, որ լինելու է թիֆլիսում: Հայ գիտնականը պիտի այցելէ նոյնպէս Վարաշաղի ճաթիկ վանքը նրա արձանագրութիւնները և ճարտարապետութիւնը ուսումնասիրելու համար: Նոյնպէս պիտի ուսումնասիրէ ուստիական լեզուն և բոլոր հնութիւնները, որոնք պահպանվել են թէ անբախնելի և թէ աւանդուութիւնների ձեով Նուխու գաւառի Վարդաշէն, Նիփ, Վարաշաղ, Խաչմաղ և Բում ուստիական գիւղերում: Չնքր կապկածում, որ Նուխու և Վարաշաղի հայ երիտասարդութիւնը արժանաւոր կերպով կընդունեն իրանց պատաւար հիւրին, հնչաւանկով նրան իր ազգօրուտ խուզարկութիւններն անելու միջոցը:

Լուսւմ գաւառի ԳԵՍԱՌԳԵԱՌ գիւղի բնակիչ Զաքարիա Գեորգիանեանից ստացանք 3 ր. յօդուտ Վանի սովետանիքի:

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԻՒՍ

Լրագիրների մէջ կարգում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Երանդական գործերը հեռահեռ փոխաւոր ընթացք են ստանում: Երբեմն երբեմն ամբողջ բացարձակ կռիւներ է ունենում պոլիցայի հետ: Բայց լինի մէջ, երբ պոլիցայականները փորձեցին կալանաւորել իրանդական կալուածական միութեան անդամներից մէկին, որ ճառասուտում էր ահաբիւն ամբոխի առաջ, նրա խողիւրը յարձակվեցին պոլիցայականների վրա և նրանցից մի քանիսին վիրաւորեցին: Պոլիցայի ստիպմանը գէշը գործածել և այս դէպքում միայն կարելի կըտ կալուանաւորել ճառասուտին, որի անուշը մինչև այժմ անյայտ է:

Այս անցքը մեծ նշանակութիւն ունի: Անգլիական ընդհանուր օրէնքների համեմատ, թէ իրանդիայի և թէ միւս տեղերի մէջ կարելի է կալանաւորել միայն այնպիսի ճառասուտների, որոնք բացարձակ զրգում են խողիւրին սպառնալով, կամ վնասուրված ընդդիմադրութիւնի ցոյց տալ իշխանութեանը: Այս հիման վրա կարելի է ենթադրել, որ թալլինի մէջ արտասանված ճառը այդպիսի վրդովեցուցիչ բնուորութիւն ունի, որովհետեւ անկարելի է մտածել, որ այժմեան կառավարութեան ժամանակ պոլիցայի համարձակվի խախտել օրէնքը, մարդկեանց ի զուր կալանաւորելով: Թէ այս ենթադրութիւնը ճիշդ է, ուրեմն կալուածական շարժումը իրանդիայի մէջ նոր ձև է ստացել: Մինչև այժմ այդ կալանակցութեան առաջնորդները գործում էին այն ձևով, որ օրէնքը պահպա-

նում էր նրանց անձնական ապահովութիւնը: ճառեր արտասանելու ժամանակ նրանք այնքան հեռու չէին գնում, որ օրէնքը նրանց հալածէր: Այդ գործուութիւնը մինչև այժմ կազմում էր իրանդական վարչութեան դժուար գործութիւնը: Կալուածական ցոյցերը մինչև այժմ անգլիական սահմանադրութեան թոյլ տուած սահմաններից չէին դուրս գալիս և ոչ ոք մնում: Այս էր պատճառը, որ մի քանիսները առաջարկեցին իրանդիայի համար առանձին բացառական օրէնքներ հրատարակել:

Թէ թալլինի անցքի ժամանակ պոլիցայի չէ չափազանցացրել իր իշխանութիւնը, ուրեմն բրիտանական կառավարութեան գործը փոքր ի շատ է հեշտացած պէտք է լինի: Բացարձակ ապստամբութեան դէմ կառավարութիւնը զինուորով փած է սովորական օրէնքներով: Երանդական մէջ կառավարական գործերը կարող են գրաւել այն տեղերը, որտեղ փողոցային անկարգութիւններ են սպասվում և բացի զորքերից կառավարութիւնը պոլիցայի ունի, որ իրանդիայի մէջ միշտ զինուորով փած է լինում: Այսպիսի ոյժերով միշտ կարելի է յաղթել փողոցային ամբոխին, երբ նա կը ձգար աղաւել կալանաւորութիւն:

Այսպէս թէ այնպէս անգլիացիների համար համակրելի չեն կարող լինել փողոցային կռիւները և նրանք աւելի լաւ են համարում գործադրել արդէն շատ անդամ աջողութեամբ փորձված միջոցը՝ զազարցնել սահմանադրական ապահովութիւնը իրանդիայի մէջ: Այս գործի հակառակորդները կարող են ասել, որ այդ միջոցը թէպէտ համարում է իր նպատակին, բայց երբեք չէ դադարեցրել չարիքը, միայն ժամանակաւորապէս կանգնաւորել է գործերի ընթացքը: Այս միջոցը գործադրուող յիտոյ իւրաքանչիւր անգամ, երբ սահմանադրութիւնը երկրի մէջ նորից ոյժ էր ստանում, իրանդիայից աւելի անբաւական և վրդոված էին լինում: Մի և նոյն բանը կարող է այժմ պատահել: Բացառական օրէնքները կարող են աւելի էլ զայրացնել իրանդացիներին: Հարկաւոր են բողոքովն այլ միջոցներ: Պէտք է երկրի մէջ մոցնել կալուածական վերանորոգութիւններ և բարելաւել իրանդացի երկրագործների վիճակը: Գլխաւորսին միջնորդութիւնը այսպէս կը փարկի, նա կարող է ասել, «Հարկաւոր է առաջ կարգը պահպանել, իսկ յիտոյ աղատութիւնը ձեռք բերել»:

Անգլիական լրագիրները հաղորդում են, որ արտաքին գործերի նախկին մինիստր մարկիզ Վալիբերիի նորեկուն քաղաքական մի ճառ արտասանեց: Խօսելով անգլիական ժողովների մասին, նախկին մինիստրը հերքում էր այն կարծիքը, իբր թէ պարլամենտը միայն ի նկատի պէտք է աւելի համայնքների ժողովի լծմանը: Արտաքին քաղաքականութեան մասին խօսելով, նա ծաղրեց ծովային ցոյցը, որ չը հասա իր նպատակին: Նա ասաց, որ լորդ Իրիսոնֆիլդի կառավարութիւնը չէ կարող պատասխանատու լինել Կուլցինիոս չէրնօ-գորցիներին յանձնելու առաջարկութեան վերաբերութեամբ: «Ի հարկէ, ասաց նա, սուլթանը այդ հարցի վերաբերութեամբ բաւական շատ պարտաւորութիւններ ունի, բայց ոչ մի պետութիւն պարտաւոր չէ ինտերֆերել ուժով իրադրծել որ և է զաշնադրութիւն: Այս կարծիքի ծանաչելը շատ փոխաւոր է և եթէ կառավարութիւնները այդպիսի ընթացք բռնեն, Եւրօպայի մէջ ընդհանուր անվերջանալի պատերազմ կը ծագի»:

Սալիբերիի խօսանքում է այժմեան մինիստրութեան վճիռը չէր նօգործական հարցը խաղաղ ճանապարհով վերջացնելու մասին: Նա բաւական է այժմեան մինիստրութեան արտաքին քաղաքականութեանը այն ժամանակից, երբ Ղը-տաթտոն լօւիսի յօդուածի մօտ արտասանեց իր ճառը: Այդ ճառից երևում է, որ Ղըտաթտոն մտադիր է հետեւել Իրիսոնֆիլդի արտաքին քաղաքականութեանը: Սալիբերիի ճառի մնացած մասը նուիրված է իրլանդական գործերին:

ԹԻԲԵՐԻՍ

Վ. Պոլից „Polit. Corresp.“ լրագրին նոյեմբերի 16-ից գրում են հետեւեալը:

Վիպլումաները անհամբերութեամբ սպասում են այն բացառական խաղաղ միջոցների հետեւանքներին, որոնցով Կերվիշ-փաշա պէտք է այրանցիների ընդդիմադրութեան առաջն տունէ: Հաւատացնում են, որ Կերվիշ-փաշայի կողմից Ֆ. Կրանը հաղորդած տեղեկութիւնները հանգստացնող բնուորութիւն ունեն և նրանց համեմատ կարելի է գործի խաղաղ փախձանի վրա յոյս դնել, բայց այդ լուրերին այստեղ ոչ ոք չէ հաւատում: Աւելի հաստատ տեղեկութիւններ ստանալու համար սուլթանը Վ. Պոլիս հրաւիրեց Իրիշ-փաշային, որ Սալիբերիի էր ուղարկված առանձին յանձնարարութեամբ: Պոլիսի մէջ գտնվում են հինգ հարուստ այրանցիներ, որոնք մշտական ալբանական մասնաժողով են կազմում: Այրանցիները այդ մասնաժողովը ընդունում են իրանց կառավարութեան տեղ և դա գործի է, որովհետեւ կարողացաւ արտաքին տալ Պրիզրենից թիւրք վարչութիւնը: Այդ մասնաժողովը վճռել է արագաշարժ գորաբաժիններ կազմել, որոնք պէտք է արագաքսն յունական ապստամբ խումբերը, որոնք լցրել են Կալիսոս և Բէսսալիա: Ասում են, որ թիւրքաց կառավարութիւնը պրանցիներին շահուհ համար մտադիր է նրանց երեք նահանգներից մի փրկելու կազմել: Վ. Պոլիսի մէջ լուր է տարածված, որ Բալբերիան Կալիսոսի և Թիսպայի մէջ 115,000 զօրք ունի: Այս թուանշանը անկասկած չափազանցցարած է, բայց թիւրքաց զինուորական մինիստրը հաւատացած է, որ թիւրքաց զօրքերը գերազանցում են յունական զօրքերին, որոնք ծաւաթ չեն պատերազմական գործի և կարգապահութեան հետ: Այս համոզմունքը այնքան արմատացած է, որ մինիստրների խորհուրդի մէջ առաջարկութիւն կըտ չը սպասել, որ յունական կառավարութիւնը սկսի պատերազմական գործողութիւններ, այլ ուղղակի յարձակվի Բուխաստանի վրա: Այդ առաջարկութիւնը անող մինիստրը ասում էր, որ կալիսոսի է հաւատացնել Եւրօպային, թէ այնները յարձակվեցան թիւրքերի վրա: Ուրեան էլ յոյները գնդին հակառակը, Եւրօպան նրանց չի հաւատալ: Այսպիսի վճիռը թէպէտ գեռ չէ կայացրած, բայց թիւրք զօրապետները շատ են ցանկանում յարձակվել յոյների վրա և ջարդել նրանց: Թիւրք կառավարութիւնը խիստ միջոցներ է գործադրում յունական մամուլի դէմ և նորերում մի կարգադրութեամբ արդիւց յունական լրագիրների իւրեքիս բերելը: Այդ հրամանի համեմատ պատժուում են յունական լրագիրներին ոչ թէ միայն ծախողները, այլ և գնողները:

ՄՇԵԿԻ ԷՆՈՒՐԻՐԵՆԵՐ

ՄԻԶԱԶԳՈՅԻՆ ԲԵՆԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 նոյեմբերի: «Herald» լրագիրը հաղորդում է, որ գաղանի տպարանը գտնվում է Խարիովի և ոչ թէ Կիւիի մէջ: Նոյն գործի մասին «Голосъ» լրագրին Խարիովից հաղորդում են. նոյեմբերի 5-ին Կիւի շէրը Կանտարակայա փողոցի վրա, Կօրլեն-Կօի տանը գտնվեցաւ գաղանի տպարանը: Բայց մամուլից գտնվեցան «Нородная Воля» հրատարակութեան ամբողջ շաբաթը սկսած մարտի 17-ից, բաւական շատ կեղծ կնիքներ, անագիրները, մի քատարակութիւնից և արգելված բրօշխներ: Կալանաւորված են երկու անձինք, որոնք ընդդիմադրութիւն չը ցոյց տուին:

ՊԵՐՄԻ, 20 նոյեմբերի: Ֆրանսիական ազգային ժողովները կը փակվեն նոյեմբերի 20-ին, նորից կը բացվեն 1881 թուի յունվարի 11-ին:

ՍՈՅՈՒՍ, 20 նոյեմբերի: Մահմետական բոլորացիները հրաժարվում են մասնակցել զինուորագործութեանը:

